

նանք, միուկներէ համար սնունդ չլինելու պատճառով, նրանք քաղցածութիւնից կկոտորուեն: Ասկայն հացահատիկներ չցանելով կարելի է խորհուրդ տալ ցանելու ուրիշ բոյսեր, որոնք երբէք չեն փնտռում միուկներէց: Այդպիսի բոյսեր դործ են ածում մեր գիւղական շրջաններում: Թէպէտ քիչ քանակութեամբ, լաւ կլինի մի երկու տարի այդպիսի բոյսեր ցանել և ստացած արդիւնքով ձեռք բերել ուտելու հաց և անասունների համար դարման: Այդ բոյսերից են՝ կաւաւոր, քրուշեն, վիկը, գետնախնձորը և մի քանի այլ բոյսեր:

Գ. Շատերը ենթադրում են, որ աւելի նպատակաւորմար կլինի ձմեռուայ սկզբներին հերկել արտերի մի մասը և միուկներին հողի երես դուրս բերելով ցրտի միջոցով կոտորել: Ոգտակար է այսպիսի հանգամանքներում նաև դաշտ բաց թողնել խողեր, որոնց սիրած կերակուրն է միջատները: սրանք իսկոյն կծողովն դաշտի միջից այդպիսիները սակաւ օգնութիւն չեն անում այսպիսի հանգամանքներում նաև թռչունները:

(Կը շարունակուի)

Գ. Ղ.



ԳՈՂԹԱՆ ԵՐԴԵՐԻ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խորենացոյ Պատմութեան մէջ տեղ տեղ ցրուած կարգում ենք Գողթան երգերից մի քանի հատուածներ, գիրք Ա. գլ. Լ. լաւ Գ.Բ. Գլ. Ժ. կա. կեւ Բանասէրները սոցա տաղաչափական կազմութեան մասին այլ և այլ կարծիքներ են յայտնած և դանդաղ կերպ տողերը բաժանած: Մեր կարծիքով՝ Գողթան երգերի այս հատուածներն ամենքն էլ մի և նոյն տաղաչափական օրէնքով և կանոնով են գրուած, որոյ մասին կամենում եմ մի քանի խօսք ասել:

Անտարակուսելի է՝ որ Հայոց մէջ ևս

նախկին դարերում ծաղկած էր բանաստեղծութիւնը կամ երգը, կային գուսաններ, որոնք յօրինում էին այն երգերն և նուագարաններով երգում թէ արքունական պալատում, թէ խնջոյքներում և թէ ամենայն ժողովրդական հանգէսներում և տօներում: Այս բանիս վկայ են այն հատուկատոր Գողթան երգերի մնացորդները, որ աւանդում է Խորենացին իւր Պատմութեանը մէջ, և ասում՝ որ մինչև իւր ժամանակներն անկուրուստ մնացած երգում էին նուագարաններով, և թէ ինքը լսած է իւր ականջներով, իսկ մի ուրիշ տեղ խօսքն ուղղելով Սահակ Բագրատունուն ասած է, վերջին Արտաշէսի դործքերը յայտնի են քեզ վիպասանների երգերից, որոնք դեռ պատմում են Գողթան դաւառում: Այս նոյնը և Մագիստրոս է վկայում մեռածաներորդ դարում, որ շինականների բերանիցը լսած այս երգերից մի քանի տող աւանդած է մեզ իւր գրութիւնների մէջ:

Ազգային բանաստեղծութեան առաջին այս շրջանն, որոյ պատկանում են Գողթան երգերը, թէպէտ և հարուստ եղած պիտի լինի, բայց շատ քիչ բան մեր ձեռքն է հասած. հաւանական է՝ որ շատ վաղ ժամանակներից սկսած՝ տեւած է մինչև Արտաշէս երկրորդ թագաւորի ժամանակ, որովհետև նորանից յետոյ՝ այս երգերի յիշատակութիւնը չկայ, և լուծւէ բոլորովին Գողթան քնարը՝ երգելու ազգային յիշատակները:

Այս երգերի կազմութեան նայելով յայտնի երևում է, որ արձակ գրութիւններ չեն, բայց և չունին այն տաղաչափական կանոնը, որ տեսնում ենք Շնորհաւոյ գրած յանգաւոր ոտանաւորների մէջ, հետևողութեամբ արարական տաղաչափութեան արուեստին, որոյ մասին ծանօթութիւն ունենալ անգամ չէին կարող Գողթան երգիչները: Նոյնպէս նման չեն նաև բուն Հայկական չափին, որով գրուած են շարականներից շատերը, այլ նման են Հայկական բազմալանկ չափին:

Հայկական չափը կամ վեցոտանին բազկանում է չորս զուգալանկ անգամներից, որ լինում է տասնըվեց ոտք՝ կամ վանկ, կամ

չորս անդուգական անդամներէց, որ երկա-
րելով առողջանութեան ժամանակ ամէն մի
անգամի պակաս վանկը՝ լինում է դարձեալ
տասներկեց։ Իսկ Հայկական բաղմամբանի չա-
փըն երկու ոտով աւելի է Հայկական չափից,
կամ աւելի պարզ ասած մի անգամով, և
այս չափով ճնորհալին մի հոգեւոր երգ յո-
րինած յիշատակ է թողած մեզ, ծանօթ ամ-
բողջ ազգին, այս երգն է, «Ջարթիք, փառք
իմ, դարթիք, և ես զարթեայց առաւօտուց
ալելուիս»։

Այս երգի տաղաչափական կազմութեան
մէջ տեսնում ենք մենք մի մեծ տարբե-
ութիւն բուն Հայկական չափից։ Նախ, հինգ
անգամով է կազմուած խառնանչիւր տողը,
հաւասարապէս մինչև վերջը այսինքն՝ առա-
ջին անգամն երկու վանկ, միւս չորս ան-
գամները՝ չորս չորս վանկ։ Երկրորդ, Հայ-
կական չափը տասներկեց վանկից աւելի չէ,
և ոչ էլ պակաս տասներկուսից, իսկ սորա
վանկերի դումարը հասնում է մինչև տասն-
ևութը։ Ուրեմն գլխաւոր տարբերութիւնն
անգամները և վանկերը մէջ է, ոչ կազմին և
ոչ էլ կերկարին, և ես այս տեսակն անուա-
նում եմ Հայկական բաղմամբանի չափ,
որ վաղուց կար ազգին մէջ, և որով ճնոր-
հալին յորինած է յիշեալ երգը։ Այս մի և
նոյն չափը նկատում եմ նաև Գողթան եր-
գերի մէջ, որ քիչ յետոյ կրացատրենք։

Յիշատակենք այժմ Գողթան երգերից
մեզ հասած հատուածներն, ինչպէս որ կան
բնագրի մէջ։ Վահագնի մասին.

Երկնէր երկին և երկիր,

Երկնէր և ծիրանի ծով.

Երկնի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն.

Ընդ եղեգան փող՝ ծովս ելանէր,

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր.

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,

Նա հուր հեր ունէր.

Ապա թէ բոց ունէր մութուս,

Եւ աչկունքն էին արեգակունք։

Արտաշէսի մասին.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան

զեղեցիկ,

Եւ հանեալ զօսկէօղ շիկափով պարանն,

Եւ անցեալ որպէս զարծուի սրաթիւ ընդ
զեան,

Եւ ձգեալ զօսկէօղ շիկափով պարանն,
Ընկէց ի մէջը օրիորդին Ալանաց.

Եւ շատ ցաւեցոյց զմէջը փափուկ օրի-
որդին,

Արագ հասուցեալ ի բանակն իւր։

Բնագրումը դրուած է «Հատուցանելով»,
իսկ մենք հետեւեալ մի ուրիշ օրինակի՝
գրեցինք «Հասուցեալ», որով և վանկը լրա-
նում է։

Արտաշէսի փեսայութեան մասին.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Ար-
տաշիսի,

Տեղայր մարդարիս ի հարսնութեանն

Սաթինկանն։

Սաթինիկի մասին.

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս

Չարտախուր խաւարտ և զաից խաւարծի
ի բարձիցն Արդաւանայ.

Արտաշէսի երիտասարդութեան օրերի մասին.

Ո՞տայր ինձ զծովս ծխանի և զառաւօտն
Նաւասարդի,

Զվազէն եղանց և զվազէն եղչերուաց,

Մեք փոխ հարուար և թմրիկ հարկանէար։

Արտաշէսի զանգատը.

Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն
ընդ քեզ տարար,

Ես աւերակացս որպէս թագաւորեմ։

Արտաշէսի անէծքը.

Եթէ դու յորս հեծցիս յազատն ի վեր
ի Մասիս,

Զքեզ կալցին բաջը, տարցին յազատ
ի վեր ի Մասիս.

Անդ կացցես և զլոյս մի տեսցես։

Վարդգէսի մասին.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
ի Տուհաց դաւառէն, զՔասաղ գետով,

Եկեալ նստեալ զճրէշ բլրով, զԱրտիմէզ-
քաղաքաւ, զՔասաղ գետով,

Կռել կոփել զգուռն երուանդայ արքայի։

Գողթան երգերից ստեղծ են մեր ձեռքն
հասածներն, և ըստ այսմ՝ ես բաժանուած
տողերը բնագրի մէջ։ Սակայն հայ բանա-
սէրներէց ոմանք կամենալով այս երգերի
տաղաչափական կազմութիւնը վերածել մի որոշ

կանոնի և չափի, կերպ կերպ են բաժանած տողերը. ինչպէս Հայր Զարբանալեանը՝ Հայ գալթութեան պատմութեան մէջ, Ս. Մալխասեանն՝ միայն «Երկնէր երկին և երկիր» հատուածն, ու տպագրած Արձագանքի մէջ, Մոռ ուսուցչապետը՝ մի քանի հատուածներ միայն, տպագրուած Մուրճ բանասիրական թերթի մէջ։ Իսկ Ֆեթթէր գերմանացի հայագէտ ուսուցչապետը Հայոց ազգային երգերի մասին՝ Թիւպլինկի հռամսեայ Հանդիսին մէջ հրատարակած է մի առանձին գրութիւն, որոյ թարգմանութիւնը կարգում ենք Վեննայի Հանդէս ամսօրեայ թերթի մէջ (1894, էջ 133)։ Գերմանացի հայագէտը՝ Խորենացւոյ Պատմութեան առաջին և երկրորդ գիրքը՝ գրեթէ միայն այս երգերից յօրինուած է համարում և յաւելուածներով ընդլայնած, և տասներկու հատ ևս առաջ է բերած։

Բանասէրների այս գովելի աշխատութեան օրինակին ևս ևս հետեւելով, սկսայ զանազան փորձեր անել, որպէս զի կարողանամ՝ երգերի բոլոր հատուածները մի որոշ կանոնի և չափի վերածել, որ հարկ եմ համարում առաջ բերել այս տեղ։

Նախ համեմատեցի Գողթան երգերը Հայկական չափին հետ, և տեսայ, որ ոչ մի նմանութիւն չկայ երկուսի կազմութեան մէջ, որովհետեւ ըստ տաղաչափութեան օրինաց՝ Գողթան երգերը հաստատուն անդամ չունին, իսկ ըստ Հայկական չափին՝ ամէն մի տողը չորս անդամ չունի։ Տողերից մի քանիսն եռանդամ են, իսկ մի քանիսն էլ անհամեմատ աւելանում են միմեանցից անդամներով, և այս պատճառաւ նաեւ ոտը կամ վանկը աւելանում է անհամեմատաբար և պակասում, և վիպական չափի նմանութիւն չէ ունենում։

Շատ փորձեր անելուց յետոյ՝ թողի այս ընդունայն աշխատութիւնը, և այնուհետեւ սկսայ գիտել՝ թէ արդեօք բնագրի տողերն իմաստի համեմատ են բաժանուած թէ ոչ, և տեսայ՝ որ բնագրի բաժանումն անորոշ և խառնակ է, այսինքն՝ ընդօրինակող գրիչն ինչպէս կամեցած՝ այնպէս էլ բաժանած է, և գլխատառերով չէ որոշած տո-

ղը տողից, որ մեր կարծիքով շփոթութեան գլխաւոր պատճառն է։ Այս անորոշ և անպատեհ բաժանումն առիթ եղաւ ինձ երկրորդ փորձն անելու, և սկսայ բաժանել տողերն իմաստին համեմատ, երկարելով և սղելով միայն ըստ տեղւոյն զհախգիրն և ը ձայնաւորը վանկերի մէջ՝ ըստ յարմարութեան և ըստ տաղաչափութեան օրինաց, և ահա այս է իմ արած բաժանումն։

Երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով, ծիրանի ծով, (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Երկն ի ծովուն ունէր ըզկարմիրիկ եղեգնիկն, ըզ կարմիրիկ եղեգնիկն, (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր, ընդ եղեգան՝ փող՝ բոց ելանէր, (տողը—18 վանկի)։

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր, նա հուր հեր ունէր, ներ ունէր, (տողը 15 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Ապա թէ բոց ունէր ըզ մուրուս, և աչկունքն՝ էին արեգակունք։ (տողը—18 վանկի)։

Բնագրումը «մուրուս» է գրուած, իսկ մենք հետեւելով ուրիշ օրինակի՝ գրեցինք ըզ մուրուս, որով տողի վանկն էլ լրանում է։

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւաւրն գեղեցիկ, գեղեցիկ (տողը 15 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եւ հանեալ զոսկէօզ շիկափոկ պարանըն, շիկափոկ պարանըն, (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եւ անցեալ որպէս զարծուի սրբաթեւ ընդ գետնն, սըրաթեւ ընդ գետնն, (տողը 13 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եւ ձգեալ զոսկէօզ շիկափոկ պարանըն, շիկափոկ պարանըն։ (տողը 12 վանկի, կրկնութեամբ—18 վանկի)։

Ընկէց ի մէջը օրիորդին Ալանաց, օրիորդին Ալանաց, (տողը 11 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եւ շատ ցաւեցոյց զմէջը փափուկ օրիորդին, փափուկ օրիորդին, (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Արագ հասուցեալ ի բանակն իւր, արագ հասուցեալ ի բանակն իւր։ (տողը 9 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Տեղ ոսկի տեղայր ի փետայութեանն Արտաշիսի, Արտաշիսի, (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն, Սաթինկանն, Սաթինկանն, (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Տենչայ Սաթինկի տիկին տենչանս զարտախուր խաւարտ, խաւարտ, խաւարտ, (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եւ ըզտից խաւարծի ի բարձիցըն Արգաւանայ, Արգաւանայ։ (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Ո տայր ինձ դժուխ ծխանի և զառաւօտըն նաւասարգի, նաւասարդի, (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Ըզվագեւն եղանց և ըզվագեւն եղջերուաց, ըզվագեւն եղջերուաց, (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Մեք փող հարուար և թմբկի հարկանէար, թմբկի հարկանէար։ (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Մինչ դու գնացեր և գերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ընդ քեզ տարար, (տողը 14 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Ես աւերակացրս որպէս թագաւորեմ, որպէս թագաւորեմ։ (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Մասիս, ի վեր ի Մասիս, (տողը 13 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Զքեզ կալցին քաջը, տարցին յազատ ի վեր ի Մասիս, ի վեր ի Մասիս, (տողը 13 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Անդ կացցես և ըզլոյս մի տեսցես, անդ կացցես եւ ըզլոյս մի տեսցես։ (տողը 9 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկըն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, (տողը 18 վանկ)։

Եկեալ նըստեալ ըզՇրէշ բլլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, (տողը 18 վանկ)։

Կըռել կոփել ըզգուռն Երուանդայ արքայի, Երուանդայ արքայի։ (տողը 12 վանկ, կրկնութեամբ—18 վանկի)։

Տողերն այսպէս բաժանելուց յետոյ ըստ

իմաստին, ընտրեցի երկարագոյն բաղմանկ տողերն ըստ բնագրին, որոնք առում են Վարդգէսի մասին,

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկըն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, (18 վանկ)

Եկեալ նըստեալ ըզՇրէշ բլլրով, զԱրտիմէդ քաղաքաւ զՔասաղ գետով, (18 վանկ)

Մեծ չափով երկար տողերն ընտրելու պատճառն այն էր, որ նախ ըստ իմաստին և բառերի դասաւորութեանը՝ կարելի չէ երկու տող համարել, կամ բաժանել, այլ առանձին տողեր են։ Եւ երկրորդ, որ այսպիսի մեծ չափով են գրուած առ հասարակ վիտական քերթուածները հին ազգերի մէջ։

Առաջնորդ ունենալով ինձ այս տողերը, տեսայ՝ որ երկու տողը 18 վանկէ, իսկ երրորդ տողը 11, և որովհետեւ արեւելեան երգիչները գրեթէ ամէն մի տողի վերջին բառերից մինը կամ երկուսը, մինչև անգամ ամբողջ տողը կրկնում են երգելու ժամանակ, և նոյն կրկնութիւնն երկուսէ առ հասարակ նաեւ Գողթան երգերի մէջ էլ, կրկնեցի ես ևս նոյն հատուածի վերջին տողի երկու բառերն, ըստ այսմ,

Կըռել կոփել ըզգուռն Երուանդայ արքայի, Երուանդայ արքայի, (18 վանկ), այս կրկնութեամբ ուղիղ 18 վանկը լրացաւ, որով և երեք տողերի ոտերի չափն էլ հաւասարեցաւ։

Այս յաջողութիւնից խախտուելով սկսայ կրկնել այն տողերի վերջին մի բառը կամ երկուսն, որոնց ոտերի չափը կամ վանկերի գումարը պակաս էր տաանեութից, և նկատեցի, որ առ հասարակ կրկնուում են զլիսաւոր բառերն այնչափ վանկերով, որչափ որ տողերն անհաւասար վանկերով պակաս են տաանեութից, և առանց իմաստը խանդարելու՝ հաւասարում են միմեանց հետ չափով և լինում 18 վանկ։ Միայն երկու տող, այն է՝

Արագ հատուցեալ ի բանակն իւր.

Անդ կացցես և ըզլոյս մի տեսցես, հարկ եղաւ կրկնել ամբողջապէս, որ իննը իննը վանկ են։ Իսկ այս կրկնութիւնները չէ

գետեղած Խորենացին իրա Պատմութեան մէջ, և Կարեւորութիւն էլ չկար գետեղելու, քանի որ աւելորդ կրկնութիւններ են մի և նոյն խօսքերին, և նոցա կրկնութիւնը կամ անկրկնութիւնն ոչ մի առաւելութիւն կամ պակասութիւն չէ պատճառում բուն իմաստին, այլ միայն վերաբերում է նոցա տաղաչափական արուեստին: Այս ամէնը կնկատէնթերցող բանասէրը վերե գետեղած տողերի բաժանմունքներին մէջ, հանդերձ իրանց կրկնութիւններով, ուր նշանակած եմ առանձին ամէն մի տողի վանկերի գումարը, և տպա կրկնելով նոցա հաւասարութիւնը, այսինքն՝ 18 վանկ:

Այս գիտողութիւնից յետոյ՝ մնում էր ինձ համոզուիլ, որ առ հասարակ Գողթան երգերի հաստատուն չափը 18 վանկ կամ ոտք է՝ Հայկական բաղմաւանի չափի համեմատ, և այս չափով էլ գրած է Շնորհալին՝ «Ջարթիք, փառք իմ» օրհնութեան երգը: Միայն Շնորհալուց գրած երգին մէջ կան հաստատուն անդամներ, և ամէն մի անգամ հաւասար վանկերով, իսկ Գողթան երգերի մէջ չէ պահպանուած այս կանոնը, այլ խառն ի խառն է:

Այս խառնակութիւնը կանոնաւորելու, կամ աւելի յարմար է ասել, գաղտնիքն իմանալու համար, զանազան գիտողութիւններ եմ արած, և վերջապէս այս մի գիտողութեամբ մասամբ պարզուած եմ համարում: Այսինքն՝ թէպէտ և Գողթան երգերն ոչ հաստատուն անդամներ և ոչ էլ հաւասարաչափութիւն ունին, բայց առհասարակ ամէն մի տողը կարելի է իննը իննը հաւասար վանկերով երկու մաս բաժանել՝ առանց իմաստը խանգարելու, և այս մասերը կարող են անգամի տեղ համարել, և այսպէս իւրաքանչիւր տողն երկու հաւասարաչափ մաս կամ անգամ կունենայ: Միայն տեղ տեղ զանցառութիւն է նշմարուում, և այն շատ չնչին, այսինքն՝ պակասում է իննից կամ մի վանկ, և կամ աւելանում է նոյնչափ, այն է՝ 8 և 10, կամ 10 և 8, այսպիսի զանցառութիւններ Հայկական չափին մէջ էլ տեղ տեղ տեսնում ենք:

Հաւասար մասերի կամ անդամների

բաժանումը ցոյց տալու համար՝ այս տեղ օրինակ կրերեմ հետեւեալ տողերը, համեմատ մեր բաժանած տողերին, հանդերձ իրանց կրկնութիւններով:

Երկնէր երկին և երկիր, երկնէր (9 վանկ) և ծիրանի ծով, ծիրանի ծով=18 վանկի.

Երկն ի ծովուն ունէր ըզկարմիրիկ (9 վանկ) եղեգնիկն, ըզկարմիրիկ եղեգնիկն=18 վանկի.

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր (9 վանկ) ընդ եղեգան փող՝ բոց ելանէր=18 վանկի.

Եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր (10 վանկ) նա հօւր հեր ունէր, հեր ունէր=18 վանկի.

Ապա թէ բոց ունէր ըզմութուս (9 վանկ) և աչկունքն էին արեգակունք=18 վանկի:

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս (9 վանկ) զարտախուր խաւարա, խաւարա, խաւարա=18 վանկի.

Եւ ըզտից խաւարծի ի բարձիցըն (10 վանկ) Արգաւանայ, Արգաւանայ=18 վանկի:

Իւրաքանչիւր տողն այսպէս երկու մեծադոյն մաս կամ անգամ բաժանելս՝ մասամբ հիմնական պատճառով եմ արած, և այս պատճառը դարձեալ հանած եմ Գողթան երգերից: Որովհետեւ առհասարակ տողերը՝ կրկնուած վերջին մի կամ երկու բառով, 18 վանկը լրացնում են, և միայն երկու տող՝ Արտաշէսի ամուսնութեան և նորա տուած անէծքի վերջին տողերը

Արագ հասուցեալ ի բանակն իւր.

Անդ կացցես և ըզլոյս մի տեսցես.

իննը իննը վանկ են, այսինքն՝ մի մի անգամ, որն որ ամբողջապէս կրկնուելով՝ պիտի կազմէ երկու անգամ, և լրացնէ 18 վանկը: Այս մի և նոյնը նկատում էի նաև մի քանի տողերի մէջ էլ, որ ըստ իմաստին և ըստ շեշտին բաժանուում են երկու անգամի, իննը իննը վանկով, զոր օրինակ,

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր (9 վանկ) ընդ եղեգան փող՝ բոց ելանէր, (18 վանկ կամ երկու անգամ):

Ապա թէ բոց ունէր ըզմութուս (9 վանկ) և աչկունքն էին արեգակունք. (18 վանկ կամ երկու անգամ):

Ուստի այս առիթ եղաւ ինձ մտածե-

լու՝ որ առհասարակ բոլոր տողերը պիտի ունենան երկու հաւասարաչափ մասեր կամ անդամներ, և սկսայ տողերը կիսել երկու մասի կամ անդամի, իւրաքանչիւրն իննը իննը վանկով, և նկատեցի՝ որ կանոնաւոր բաժանուում են բոլոր տողերը: Բայց դուցէ մինն ասէ, որ բայ ի մի քանիսից, տողերն ըստ իմաստին և ըստ շեշտին չեն բաժանուում: յիշուի հարկաւոր է այս կանոնը կամ ճշտութիւնը պահպանել արդի օտանաւոր գրութիւններին մէջ, սակայն մենք անգիտակ չենք բոլորովին Գողթան երգիչների երաժշտական արուեստին, որով եղանակ կամ ձայն էին յօրինում իրանց երգերից, և երգում ոչ միայն այս հատուածներն, այլ ամբողջ ազգային յիշատակները, և եղանակաւոր երգերի մէջ ոչ միայն նշանակութիւն չունի՝ եթէ անդամները չեն բաժանուած ըստ շեշտին և կամ իմաստին:

Որպէս զի ընթերցող բանասէրը պարզ նկատէ մեր այս արած բաժանումը, և որոշ գաղափար կազմէ ու համոզուի, մէջ կրենք այս տեղ մնացած հատուածներն էլ՝ բաժանելով երկու մասի կամ՝ անդամի:

Հեծաւ արի արքայն Արտաշէս (9 վանկ) ի սեւաւն գեղեցիկ, գեղեցիկ—18 վանկի:

Եւ հանեալ զօսկէօղ շիկափոկ (9 վանկ) պարանըն, շիկափոկ պարանըն—18 վանկի:

Եւ անցեալ որպէս զարծուի սրբաթիւ (10 վանկ) ընդ գետն, սրբաթիւ ընդ գետն—18 վանկի:

Եւ ձրդեալ զօսկէօղ շիկափոկ (9 վանկ) պարանըն, շիկափոկ պարանըն—18 վանկի:

Ընկէց ի մէջք օրիորդին (8 վանկ) Արաւաց, օրիորդին Ալանաց—18 վանկի:

Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ (8 վանկ) օրիորդին, փափուկ օրիորդին—18 վանկի:

Արագ հասուցեալ ի բանակն իւր (9 վանկ) արագ հասուցեալ ի բանակն իւր—18 վանկի:

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն (10 վանկ) Արաւշխի, Արաւշխի—18 վանկի:

Տեղայր մարգարիտ ի հարսնութեան (9 վանկ) Սաթինկանն, Սաթինկանն, Սաթինկանն—18 վանկի:

Ո տայր ինձ զծուխ ծխանի և զառաւուրն (10 վանկ) Նաւասարդի, Նաւասարդի—18 վանկի:

Ըզ վագեին եզանց և ըզ վագեին (9 վանկ) եղջերուաց, ըզ վագեին եղջերուաց—18 վանկի:

Մեք փող հարուար և թմրկի (8 վանկ) հարկանէար, թմրկի հարկանէար—18 վանկի:

Մինչ դու գնացեր և զերկիրս ամենայն (10 վանկ) ընդ քեզ տարար, ընդ քեզ տարար—18 վանկի:

Ես աւերակացրս որպէս (8 վանկ) թագաւորեմ, որպէս թագաւորեմ—18 վանկի:

Եթէ դու յորս հեծցիս յազատ (8 վանկ) ի վեր ի Մասիս, ի վեր ի Մասիս—18 վանկի:

Զքեզ կալցին քաջք, տարցին յազատ (8 վանկ) ի վեր ի Մասիս, ի վեր ի Մասիս—18 վանկի:

Անդ կացցես և ըզ լոյս մի տեսցես (9 վանկ) անդ կացցես եւ ըզ լոյս մի տեսցես—18 վանկի:

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն (8 վանկ) ի Տաւադ գաւառէն, զՔասաղ գետով—18 վանկի:

Եկեալ նստեալ ըզ Շրէշ բլլով (8 վանկ) զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով—18 վանկի:

Կըսել կոփել ըզ գուռն երուանդայ (9 վանկ) արքայի, Երուանդայ արքայի—18 վանկի:

Գողթան երգերի այս հատուածները մի կանոնի և մի չափի վերածելուց յետոյ, մընում էք քննել և այն տողերն՝ որոնք ցրուած են թէ առաջին և թէ երկրորդ գրքի մէջ: Պէտք է ասել՝ որ այս տողերը, թէպէտ և քաղուածք են նոյն ազգային երգերից, սակայն առ հասարակ խառն են Խորենացուց խօսքերի հետ, և կամ կրճատուած, ինչպէս Հայկայ, Տիգրանայ նկարագիրը, և թուելեաց երգին մէջ, գիրք Ա. գլ. Ի. Արտաւազդայ մասին ասուած մի քանի տողերը, և Բիւրատեան Սմբատայ՝ ըստ առասպելին (Գողթան երգերի) նկարագիրը, գիրք Բ. գլ. Ժբ. և ուրիշ այսպիսի հատուածներ: Երկար աշխատելուց և շատ փորձեր անելուց յետոյ՝ որ դուցէ կարողանամ՝ Պատմութեան մէջ ցրուած այս տողերն էլ վերածել մի և նոյն

կանոնին և չափին, տեսայ որ ի դուր աշխատութիւն է, որովհետեւ խառն են մեր Պատմահօր խօսքերի հետ և կամ կրճատուած: Սակայն աւելորդ չեմ համարում, որչափ խառն ու կրճատ էլ լինին, նոյն տողերից մի քանիսն առաջ բերել, որովհետեւ գիտած եմ՝ որ նոցա մէջ ևս նոյն չափի հետքերը մասամբ երեւում են: Զոր օրինակ,

«Զի ոսհմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ այնքան սննի» գ. ա. գլ. Ը:

«Զքաջաց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զանդի» գ. ա. գլ. Ը:

«Բնակեցեր ի մէջ ցրտութեան սառնամանեաց»:

«Այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ»:

«Եւ հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան»:

«Ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան», գ. ա. գլ. Ժա:

«Փախստական լինի Կազմես առ Հայկ, քաջութեանցիս առաջի իւր՝ առաքէ»:

«Իտեա, ասէ, ով մեծդ զիւցազանց, զի զիմեալ գայ ի վերայ քո Բէլ»:

«Յաւէրթիւք քաջօք, և երկայնադիւղօք հասալօք սկայիւք մրցսղօք»:

«Եւ իմացեալ իմ՝ զմերձ լինելն նորա ի սուն իմ, փախեայ»:

«Եւ գամ՝ աւատիկ տաղնապա»:

«Արդ աճապարեա խորհել, որ ինչ գործելոց ես»:

«Յեւանելն մեր հանգէս ամբոխին Բէլայ, զիպեալ ջանասցօք տեղւոյն»:

«Ուր անցեալ կայ ի մէջ խոռն քաջացն Բէլ», գ. ա. գլ. Ժա:

«Արանց կացեալ զլուխ, և արութիւն ցուցեալ, զաղդս մեր բարձրացոյց»:

Եւ զբնդ լծով կացեալս՝ լծագիրս և հարկապահանջս կացոյց բազմաց.

Միեւրն սակոյ և արծաթոյ և քարանց պատուականաց.

Եւ զգետտուց և պէս պէս գունոց և անդուածոց.

Արանց հատակաց և կանանց միանգամայն բազմացոյց.

Որով տգեղագոյնքն իրրե զգեղաւորս երեւէին սքանչելիք.

Եւ զեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ գիւցաղնացեալք.

Հետեւմարտն ի վերայ ուսոյ ձիոց բերեալք, և սարսաւորքն առ հասարակ գիւղաղեղունք և այլն գ. ա. գլ. իգ:

Այսպէս հեազհետէ քննելով հասայ մինչև գ. բ. գլ. Ժ. ուր պատմուած է Ալդնաց յարձակումը Հայաստան, պատերազմը, և Ալանաց թագաւորի որդւոյն գերի բռնումը: Սոյն այս գլխում կարգում ենք մի քանի տողեր այս գործերի վերաբերութեամբ, առուած Ալանաց թագաւորի դստեր Սաթեհնիկի բերանով, որ գետի ափին մի բարձր տեղ կանդնած, թարգմանչի ձեռքով խօսում է Արտաշէսի հետ, այս խօսքերով. «Բեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց, եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպտտանիդ, զի վասն միոյ քննու ոչ է օրէն գիւցաղանց զայլոց գիւցաղանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով և ի սորկաց կարգի պահել, և թըշնամութիւն յաւիտենական ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատեալ»:

Լսելով Արտաշէս Սաթեհնիկի խմսատուն խօսքերն և այն պատճառով էլ նորան սիրելով, կատարում է խնդիրը, և ուղարկում Սմբատին՝ որ երթայ խնդրէ Սաթեհնիկին իրա կնութեան՝ Ալանաց թագաւորից: Այս խնդրի պատասխանը Գողթան երգիչը պատասխանում է Ալանաց թագաւորի բերանով, ասելով, «Եւ ուստի տացէ քաջն Արտաշէս՝ հազարս ի հազարաց և բիւքս ի բիւքս քնդ քաջազոյ կոյս օրիորդիս Ալանաց»:

Քննելով այս տողերն երեւցաւ, որ մի մասը Գողթան երգիչների զուտ խօսքերն են, ոչ կրճատուած և ոչ էլ խառնուած մեր Պատմահօր խօսքերի հետ, իմաստին համեմատ բաժանեցի տող առող, և տեսայ՝ որ մի և նոյն մեր յայտնած կանոնին և չափին են պատկանում, զոր օրինակ,

Բեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց, (տողը 18 վանկ).

եկ հաւանեաց աշագեղոյ դստերս Ալա-
նաց՝ տալ ըզպատանիդ, (տողը 18 վանկ)։

Ձի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւ-
ցաղանց, օրէն ղիւցազանց, (տողը 13 վանկ,
կրկնութեամբ—18 վանկ)։

Ձայլոց դիւցաղանց զարմից բառնալ
ըզկենդանութիւն, զկենդանութիւն (տող 14
վանկ՝ կրկնութեամբ—18 վանկ)։

Իսկ շարունակութիւնը, «կամ ծառա-
յեցուցանելով և ի ստրկաց պահէր» և այն,
խառնուած են Խորենացւոյ խօսքերի հետ,
և կամ կրճատուած։

Այսպէս և նոյն չափով է նաև Ալանաց
թագաւորի պատասխանը, զոր օրինակ,

Եւ ուստի տացէ քաջն Արտաշէս հա-
զարս ի հաղարաց, հազարաց, (տողը 15
վանկ, կրկնութեամբ—18 վանկ)։

Եւ բիւրբս ի բիւրբս ընդ քաջազոյ
կոյս օրիորդիս Ալանաց (տողը 18 վանկ)։

Այս տողերի մէջ ևս նոյն չափն է ե-
րևում և մի և նոյն կրկնութիւնը տողերի
վերջերում, իսկ ամէն մի տող էլ բաժան-
ուում է իննը իննը վանկով երկու մաս կամ
անդամ։ Միայն երկու տեղ այս ճշգրտութիւ-
նը թերի է, և բաժանուում 10 և 8 վանկ,
ինչպէս տեսանք առաջին հատուածների մէջ
ևս զոր օրինակ։

Քեզ տեսմ, այր քաջ Արտաշէս, որ (9
վանկ) յաղթեցեր քաջ ազգին Ալանաց—18
վանկի։

Եկ հաւանեաց աշագեղոյ դստերս (10
վանկ) Ալանաց՝ տալ ըզպատանիդ—18
վանկի։

Ձի վասն միոյ քինու ոչ է օրէն (10
վանկ) դիւցաղանց, օրէն ղիւցազանց—18
վանկի։

Ձայլոց դիւցաղանց զարմից բառնալ
(9 վանկ) զկենդանութիւն, զկենդանութիւն
—18 վանկի։

Եւ ուստի տացէ քաջն Արտաշէս (9
վանկ) հազարս ի հաղարաց, հազարաց,—18
վանկի։

Եւ բիւրբս ի բիւրբս ընդ քաջազոյ (10
վանկ) կոյս օրիորդիս Ալանաց—18 վանկի։

Արդ համառօտելով մեր խօսքը՝ կա-
սեմք, Առաջին, Գողթան երգերը կազմուած

են 18 վանկով, Հայկական բազմափնակ չա-
փի համեմատ երկրորդ, ամէն մի տողում
երկու հաւասարաչափ վանկական մեծ ան-
դամ կայ՝ իննը իննը վանկով, և եթէ տեղ
տեղ զանցառութիւն է երևում, վերագրելու
է այն նոցա երաժշտական արուեստին, որին
բոլորովին տեղեակ չենք։ Երրորդ, իւրա-
քանչիւր տողի ամբողջական 18 վանկից կա-
րելի է պակասեցնել մինչև իննը վանկ,
այսինքն՝ երկու անգամներից մինը։ Զորրորդ,
եթէ տողերի ոտը պակաս է 18-ից՝ երկու,
երեք, չորս, կամ աւելի վանկերով, պիտի
կրկնուին նոյնչափ վանկերով վերջին մի բա-
ռը, կամ երկուքն, երեքը, կամ մի և նոյն
բառն երկու, երեք անգամ, ուստի և հարկ
է՝ որ նոյն պակաս վանկերի համեմատ վան-
կերով բառեր լինին տողի վերջում, որ ոչ
պակասի և ոչ էլ աւելանայ 18 վանկից։ Իսկ
թէ մի անգամը, իննը վանկ պակաս է, պէտք
է ամբողջապէս կրկնել տողը։

Մեր արած դիտողութիւնն այսչափ է.
Իսկ եթէ մեր ձեռքն հասած լինէր Գողթան
երգերի ամբողջութիւնը, կամ դէթ մի ըն-
դարձակ մասը, դուցէ կարողանայինք այն
ժամանակ աւելի որոշ, ճիշդ և մանրամասն
խօսիլ։

Այս տեղ կներումենք մեր խօսքը Գող-
թան երգերի վերաբերութեամբ տեսլով,
թէպէտ և դրուած են այս երգերը Հայկա-
կան բազմափնակ չափով, բայց մասամբ էլ
տարբերութիւն ունին նոցանից։ Գլխաւոր
տարբերութիւնն այն է՝ որ հաստատուն ան-
գամներ չունեն ըստ իմաստին, այլ վանկա-
կան է, և պակաս վանկերը լրանումեն տո-
ղերի վերջին բառերի կրկնութեամբ։ Եւ ո-
րովհետեւ այս տեսակը յատուկ է միայն ա-
րեւելեան երգիչներին, և նոյնն երևում է մեր
Գողթան երգիչների վիպական դրութիւն-
ների մէջ էլ, ուստի և յարմար եմ համա-
րում եւս անուանել այս տեսակը՝ վիպական
չափ։

ՄԿԻՏԻՉ ՊԵԼԵՆՆ

Ծանօթ. Այս հատուածը հանած եմ Խորենաց-
ւոյ Պատմութեան ընդարձակ ուսումնասիրութիւ-
նիցս, որ գրած եմ նոյն պատմութեան՝ հանգ-
Խորեն կպիսիւղոսի ձեռքով աշխարհարառ թարգ-
մանութեան առթիւ։